

ՀՀ Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանի ելույթը՝ Քաջարան քաղաքի

55-ամյակի առիթով

Մեծարգո պարոն Նախագահ,

Հարգարժան հյուրեր,

Սիրելի քաջարանցիներ.

Այսօր համախմբվել ենք Սյունյաց գողտրիկ անկյուններից մեկում՝ Քաջարան քաղաքի 55-րդ տարեդարձը միասին տոնելու համար: Ու համոզված եմ, որ հորեյարի համար մեծագույն նվերը երկրի ղեկավարի ներկայությունն է, ինչը մեզ համար շատ պատվաբեր է ու միաժամանակ պարտավորեցնող:

Հինգուկես տասնամյակ է՝ աշխատասեր, իր հող ու ջրին, ծննդավայրին նվիրված քաջարանցին արարում է, ստեղծագործում, կրկնապատկում ձեռքբերումներն ու ոգևորությամբ ու հաստատակամությամբ հանդես գալիս ապագային միտված հավակնոտ ծրագրերով:

Այսօր մեզ՝ սյունեցիներին, հերթական առիթն է ընձեռվել մեծարելու աշխատավոր մարդուն, ով անտրտունջ կրում է հանքագործի պատվաբեր անունը, ով պատրաստ է իր չարչարանքի պտուղները կիսել իրենից հեռու մեկ այլ համայնքում ապրող կարիքավոր մարդու հետ, ով սրտանց հպարտանում է իր ձեռնարկության հաջողություններով ու բարեգործական նախաձեռնություններով, ով իրենն է համարում այս քաղաքի հաղթանակներն ու նաև հոգսերը:

Աշխարհի պղնձամոլիբդենային խոշորագույն 8 հանքավայրերից մեկը շահագործողի՝ քաղաքաստեղծ ձեռնարկության շնորհիվ այստեղ հիմնախնդիրներն օր առաջ են լուծում ստանում ու նպատակասլաց քաջարանցին երբևէ չի բավարարվում եղածով:

Գնահատելով, վերարժևորելով երեկվա օրն ու արածը՝ քաջարանցին կարողանում է առանձնացնել կարևորագույնն ու սերունդներին է փոխանցում տարիներով

կուտակված փորձն ու իմաստությունը: Նման մի առաքելությամբ էլ ներկայիս

սերուրդներն են հանդես եկել: Երախտագետ մարդը միայն կարող է հուսալ, որ

տարիներ հետո հիշելու են նաև իր ներդրումը: Այսօր մենք կրկին մեծարելու ենք մի

մարդու, ով 18 տարի գլխավորել է Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը, ում

նվիրված, սրտացավ ու հեռահար գործունեությունն ուղղված էր Քաջարանի հանքավայրի արդյունավետ շահագործմանը: Այսուհետ Ֆրունզե Պետրոսյանն իր պարտավորեցնող ներկայությամբ լինելու է մեր կողքին: Ու գալիք սերունդների համար, ինչպես և տարիներ առաջ իմ ու հասակակիցներիս համար, ուղեցույց են դառնալու նրա ու տասնյակ նրա նման նվիրյալների կյանքն ու գործունեությունը: Այսօր մենք հանդիսավորությամբ կտրելու ենք նաև լեռնագործների կողմից համայնքի հորեյանի առթիվ արված նվերի կարմիր ժապավենը: Միջազգային ստանդարտներով հիմնանորոգված, գերժամանակակից սարքավորումներով հագեցած բժշկական կենտրոնն այսուհետ սպասարկելու է ոչ միայն Քաջարանի բնակչությանն ու առողջական խնդիրներով մարդն այլևս ստիպված չի լինի բռնել մայրաքաղաքի ճամփան:

Ու սա, բնականաբար, վերջին խոշոր նախագիծը չի լինի համայնքում:

Համոզված եմ, որ հինգ տարի հետո հերթական հորեյանը տոնելիս ունենալու ենք ավելի բարեկարգ քաղաք, ավելի բարեկեցիկ կյանքով ապրող քաջարանցիներ: Իսկ դրա համար կարևորագույն նախապայմանը մեր երկրում նահատակների արյան գնով ձեռք բերված խաղաղությունը պահպանելն է, որպեսզի աշխատավոր մարդը ստիպված չլինի կրկին զենք բռնել, ինչպես դա արեց անկախության առաջին տարիներին:

Ուզում եմ կրկին շնորհավորել համաքաղաքացիներիս, իսկ Ձեզ՝ պարոն Նախագահ, մեկ անգամ ևս հայտնում ենք մեր երախտագիտությունը՝ քաջարանյան տոնախմբությանը մասնակցելու համար: Բարեկեցություն եմ մաղթում մեր ազգին, խաղաղություն՝ մեր երկրին:

Շնորհավոր տոնդ, Քաջարան:

Շնորհակալություն: